

ԵՆԹԱԿԱՅԻ ԵՎ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՈՃԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱԴՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Շարադասությունը, որպես լեզվական երևույթ, հետաքրքրել է լեզվաբաններին և լեզվի հարցերով զբաղվողներին դեռ շատ վաղուց (Դիոնիսիոս Գալիկառնասցին մ.թ.ա. մոտ 30 թ. գրեց շարադասության մասին առաջին տրակտատը), սակայն շարադասությունն այսօր ևս չի կորցրել իր արդիականությունը որպես հաղորդակցման կարևորագույն տարրերից մեկը: Շարադասությունն ուսումնասիրվել է տարբեր տեսանկյուններից, տրվել են զանազան բնորոշումներ ու դասակարգումներ՝ հաշվի առնելով ուսումնասիրվող առարկայի բնույթը, նրանում կապակցման դերն ու նշանակությունը և այլն:

Հայտնի է, որ անգլերենն ու հայերենն ունեն կառուցվածքային որոշակի տարբերություններ, և ըստ էության պատկանում են տարբեր լեզվատիպերի. անգլերենը վերլուծական լեզու է՝ համադրական տարրերով, իսկ հայերենը համադրական է՝ վերլուծական տարրերով: Հատկապես այս տարբերությամբ է պայմանավորված շարադասության նշանակությունը համեմատվող լեզուներում: Վերլուծական լեզուներում շարադասությունը համեմատաբար կայուն է, քանի որ վերջավորությունների բացակայությունը լրացվում է նախադասության անդամների դիրքով, որի փոփոխությունը հանգեցնում է իմաստային խճողումների: Մինչդեռ համադրական լեզուներն ունեն համեմատաբար ճկուն շարադասություն և նախադասության անդամների դիրքը շատ հաճախ պայմանավորված է հաղորդակցական նպատակով, այսինքն՝ նախադասության շեշտվող անդամը դրվում է նախադասության սկզբում կամ վերջում (համաձայն Ի. Ռ. Գալպերինի՝ սրանք նախադասության նշանակալից դիրքերն են)¹, որը չի հանգեցնում իմաստային խեղաթյուրումների:

Շարադասության գործառնությունների վերաբերյալ կան բազմաթիվ մոտեցումներ, սակայն մեզ համար ընդունելի է այն, որ շարադասությունն ունի երեք հիմնական գործառնությո՝ քերականական, հաղորդակցական և ոճական:

Ստորև անդրադառնում ենք ոճական գործառնության:

Վերջինս բնորոշ է թե՛ կայուն և թե՛ ազատ շարադասությամբ լեզուներին, տվյալ դեպքում անգլերենին և հայերենին: Ոճական գործառնության կիրառման նպատակն է խոսքին հյուբեղություն, հնչեղություն, նոր նրբերանգներ ավելացնելը, ինչպես նաև շեշտել և ընդգծել միտքը: «Սովորական շարադասության խախտումը, որի հետևանքով նախադասության մի որևէ անդամ ընդգծվում է և ստանում հուզական կամ արտահայտչական նրբերանգ, կոչվում է շրջում կամ ինվերսիա»²:

Ոճականորեն չնշույթավորված հաստատական նախադասության ենթական թե՛ անգլերենում և թե՛ հայերենում մեծ մասամբ նախորդում է ստորոգյալին: Օրինակ

The ponies would eat any kind of food, scraps of loaf, potato and apple rinds, even orange peel (A.J. Cronin, The Citadel, p. 87).

Պոնիններն ուտում էին ինչ պատահեր. հաց, կարտոֆիլի կլեպ, խնձորի կճեպ, նույնիսկ նարնջի կեղև (Ա. Կրոնին, «Միջնաբերդը», էջ 154):

The thousand injuries of Fortunato I had borne as I best could, but when he ventured upon insult I vowed revenge (The Short Story, p. 37).

Ֆորտունատոյի բյուրավոր վիրավորանքներին դիմանում էի որքան կարողանում էի, բայց երբ հանդգնեց անպատվել ինձ, երդվեցի վրեժ լուծել (XIX դարի ամերիկյան պատմվածք, էջ 57):

Գարնանային առավոտը խոստանում էր պայծառ և արևոտ օր (Ա. Բակունց, Երկեր, էջ 115):

Սոսկվայի հանդիսատեսին երևալու իմ ցանկությունը իրականացրեց Ագյանը (Վ. Փափագյան, «Հետադարձ հայացք», հ. II, էջ 70):

Թե՛ Զ. Գրինբերգը և թե՛ Վ. Դ. Արակինն իրենց աշխատություններում որպես նախադասության անդամների տիպաբանական վերլուծության չափանիշ նշում են նաև ուղիղ խնդրի և ստորոգյալի ունեցած դիրքը ենթակայի նկատմամբ: Եվ, ըստ Արակինի, անգլերենը շատ հնդեվրոպական լեզուների նման պատկանում է S+P+O տեսակին, իսկ հայերենը՝ S+O+P³: Ըստ Առակինի՝ հայերենում ենթական գտնվում է նախադասության վերջում, որն էլ նրա համար պարտադիր դիրք է⁴: Եվ ինչպես ցույց են տալիս նախնական ուսումնասիրությունները՝ հայերենին նույնպես, ինչպես անգլերենին հիմնականում բնորոշ է S+P+O կառուցվածքը, թեև հանդիպում է նաև S+O+P-ն: Ինչպես նշում է Զ. Գրինբերգը, լեզուների մեծ մասին բնորոշ է ոչ թե մեկ, այլ մի քանի շարահատություն, սակայն նրանցից միայն մեկն է գերակշռող⁵: Օրինակ

Ընկերս Բանաց սուլում էր մի երգ և ծիու քայլերի համեմատ թամբի վրա օրորվում (Ա. Բակունց, Երկեր, էջ 115):

Գուրգենը առաջարկեց ինձ գրել որևէ բան մեսրոպյան գրական հայերենով (Հ. Աճառյան, Կյանքիս հուշերից, էջ 219):

Անգնից մի քիչ հեռու արտերն էին: Ոտքերը վեր քշտած մի մարդ ջուր էր տանում (Ա. Բակունց, Երկեր, էջ 263):

Անգլերենում և հայերենում կա մի կառույց Adv mod. +P+S, որն անգլերենում ունի որոշակի հուզական նրբերանգ, մինչդեռ հայերենում այն չեզոք է: Սա պայմանավորված է երկու լեզուների շարահատության առանձնահատկություններով: Անգլերենում հիմնականում նախադաս դիրքով հանդես է գալիս տեղի պարագան, որը միտված է շեշտելու գործողության կատարման վայրը, և իհարկե ենթական, քանի որ նախադասության սկզբն ու վերջը, ինչպես արդեն նշել ենք, նրա նշանակալից դիրքերն են: Հայերենն, ունենալով ավելի ճկուն շարահատություն, այս կառույցն օգտագործում է առանց հուզական երանգավորման և նախադաս դիրքում հանդես կարող է գալ ստորոգյալի ցանկացած լրացում: Հմնտ.

Close to the town was an elevated green spot surrounded by an ancient square earthwork (T. Hardy, The Mayor of Casterbridge, p. 467).

Քաղաքին կալած կանաչապատ մի բարձունք կար՝ հնամենի քառակուսի հողապատնեշով շրջապատված (Թ. Հարդի, Քեսթերբրիջի քաղաքապետը, էջ 130):

The house was in a ruinous condition and on the door was nailed a board, intimating that it was to let (Ch. Dickens, Oliver Twist, p. 89):

Տունը ավերակ վիճակում էր, և դռան ցուցանակի վրա գրված էր, որ վարձու է (Զ. Դիկկենս, Օլիվեր Թվիստի արկածները, էջ 124):

Just behind us was a family of four living in a cluster of dry-good boxes (Modern American Short Stories, p. 416).

Մեր կողքին՝ չոր, հարմարավետ արկղերում, չորս հոգուց բաղկացած մի ընտանիք էր ապրում (XX դ. արտասահմանյան արձակ, էջ 464):

Պատուհաններին ապակու տեղ խմորով փակցրել էին յուղած թուղթ (Ա. Բակունց, Երկեր, էջ 117):

Ներքևը՝ ծորում Բաստուտ գետի մյուս ափին, քարածայրերի վրա թառել են մի քանի տներ (Ա. Բակունց, Երկեր, էջ 135):

Մի առանձին խումբ են կազմում there is ձևական, անդեն կառույցով կազմված նախադասությունները, որն, ըստ որոշ լեզվաբանների, շրջման արդյունք է: Սակայն մենք համակարծիք ենք այն ուսումնասիրողների հետ, որոնք այս կառույցը դիտում են իբրև ուղիղ շարադասություն, թեև սրա ներսում ևս հնարավոր է կատարել շրջում: Այս դեպքում արդեն ունենում ենք որոշակի հուզական երանգավորում: Հմտ.

Only near the Ayutamiento, where the priest was complying with his duties with the fascists, was there any ribaldry (E. Hemingway, For Whom the Bell Tolls, p. 105).

Միայն Ayutamiento-ի մոտ, որտեղ քահանան իր ծեսն էր կատարում, աղմուկ էր, հայհոյում էին (Է. Հեմինգուեյ, Ում մահն է գուժում զանգը, էջ 328):

The two gentlemen watched Oliver's earnest face, as he spoke, and looking from him to each other, seemed to feel satisfied of the accuracy of what he said. Still in no direction were there any appearances of the trampling men in hurried flight (Ch. Dickens, Oliver Twist, p. 184):

Մինչդեռ Օլիվերը խոսում էր, երկու ջենտլմեններն ուշադիր դիտեցին նրա անմեղունակ դեմքը, ապա իրար նայեցին: Ըստ երևույթին նրանք չէին կասկածում տղայի խոսքերի ճշմարտությանը: Այնուամենայնիվ, ոչ մի տեղ կարելի չէր խուճապահար մարդկանց ոտնահետքեր նկատել (Զ. Դիկկենս, Օլիվեր Թվիստի արկածները, էջ 285):

Մեր կարծիքով, բնագրին հարազատ, մնալով թարգմանությունը կարելի է ձևակերպել նաև հետևյալ կերպ, որն էլ թարգմանվող լեզվին կհաղորդի բնագրի ոճական հյուսվածությունը:

Օլիվերի խոսելու ընթացքում երկու ջենտլմեններն ուշադիր զննում էին նրա անմեղ դեմքը, և թվում էր, թե զոհ էին նրա պատմածի ճշգրտությունից: Այնուամենայնիվ, խուճապահար մարդկանց ոտնահետքեր ոչ մի ուղղությամբ չէին երևում:

Հայերենում ևս երբեմն հանդիպում ենք նմանատիպ կառույցի, որն ունի քերականական նշանակություն և նախորդ նախադասության հետ կապակցող դեր: Սակայն այս կառույցը լայն կիրառություն չունի: Օրինակ

Այս փոքրիկ թաղի ծայրին կա Քյուշյուկ համամ կոչված թաղամասը (Հ. Աճառյան, Կյանքիս հուշերից, էջ 12):

Ոճականորեն նշույթավորված նախադասության ստորոգյալը դրվում է ենթակայից և նրա լրացումներից առաջ: Ենթակայի և ստորոգյալի շրջադասու-

թյունը պայմանավորված է ստորոգյալի կազմությամբ: Հայտնի է, որ ստորոգյալը լինում է պարզ և բաղադրյալ, իսկ բաղադրյալն էլ իր հերթին լինում է բա-
յական և անվանական: Ստորոգյալի շրջադասության դեպքում այն ամբողջ-
վին կամ ավելի հաճախ նրա բաղադրիչներից մեկը տեղափոխվում է ենթակա-
յից առաջ՝ ընդգծելու գործողությունը:

1. Անգլերենում ժամանակաձևերի մեծ մասն ունի վերլուծական կառուց-
վածք, այսինքն՝ ստորոգյալը բաղկացած է օժանդակ բայից և իմաստակիր բա-
յից, ուստի նախադասության որևէ միտք ընդգծելու համար օժանդակ բայը դը-
վում է ենթակայից և նրա լրացումներից առաջ:

And as Clare was oppressed by the outward heats, so was he burdened inwardly by waxing fervour of passion for the soft and silent Tess (T. Hardy, Tess of the D'Urbervilles, p. 164).

Քլերը նեղվում էր տոթից ու տոչորվում էր բորբոքվող կրքից՝ քնքուշ ու լռակյաց Տեսսի համար (Թ. Հարդի, Տեսը դ'Էրբերվիլների տոհմից, էջ 166):

Հեղինակը դիմում է շրջասացության ոճական հնարին ընդգծելու երիտա-
սարդի ունեցած զգացմունքը: Նույն լեզվական միջոցն է օգտագործված նաև
ստորև բերվող օրինակներում, երբ մի դեպքում շրջասացությամբ հեղինակը
ցույց է տալիս, թե ինչ ապրումներ է ունեցել ֆաշիստների ծեռքն ընկած աղջի-
կը, իսկ մյուս դեպքում ընդգծվում է հերոսուհու զարմանքը, երբ կեսգիշերին
արթնանալով՝ ծխի հոտ է առնում:

She wouldn't speak and she cried all the time and if anyone touched her she would shiver like a wet dog. Only lately has she been much better (E. Hemingway, For Whom the Bell Tolls, p. 28):

Շատ տարօրինակ էր, չէր խոսում, անընդհատ լալիս էր, իսկ երբ որևէ մեկը
դիպչում էր, սկսում էր թրջված շան նման դողալ: Երկար ժամանակ անցավ,
մինչև որ սկսեց տեսքի գալ: Հետո արդեն լավ սիրունացավ (Է. Հեմինգուեյ, Ում
մահն է գուժում զանգը, էջ 249):

I was surprised at this circumstance; but still more was I amazed to perceive the air quite dim, as if filled with smoke (Ch. Bronte, Jane Eyre, p. 996).

Այս հանգամանքը ինձ զարմանք պատճառեց, բայց ավելի ևս զարմացա,
երբ նկատեցի, որ օդը բոլորովին մշուշապատ է, կարծես լցվել էր ծխով
(Շ. Բրոնտե, Ջեյն Էյր, էջ 169) և այլն:

Վերը բերված օրինակներում to be օժանդակ բայն է տեղափոխվում ենթա-
կայից առաջ, սակայն վերլուծական ստորոգյալը կազմվում է նաև do օժան-
դակ բայի միջոցով, և այս դեպքում հնարավոր է և՛ do օժանդակ բայի, և՛ իմաս-
տակիր բայի՝ ենթակայի նկատմամբ նախադաս դիրքը:

Hate him she did not quite; but he was dust and ashes to her, and even for her name's sake she scarcely wished to marry him (T. Hardy, Tess of the D'Urbervilles, p. 98).

Այսինքն նրան այնքան էլ չէր ատում, բայց նա իր համար դարձել էր փոշի
ու մոխիր և նույնիսկ ի սեր իր անվան հազիվ թե ցանկանար ամուսնանալ նրա
հետ (Թ. Հարդի, Տեսը դ'Էրբերվիլների տոհմից, էջ 166):

So happy, so gratified did I become with this new interest added to life, that I ceased to pine after kindred (Ch. Bronte, Jane Eyre, p. 995).

Այնքան ուրախ, այնքան երջանիկ էի այն նորով, որ ավելացել էր իմ կյանքում, որ դադարեցի մտածել ու տանջվել ազգականների կարոտից (Շ. Բրոնտե, *Ջեյն Էյր*, էջ 167):

Երկրորդ նախադասության մեջ հենց ժօ օժանդակ բայի կիրառմամբ է պայմանավորված այս նախադասության ոճական արժեքը, որն էլ ավելի է ընդգծվում նրա՝ ենթակայի նկատմամբ ունեցած նախադաս դիրքով:

Հայերենում օժանդակ բայերն այդքան «ազատություն» չունեն և չեն կարող առանց իմաստակիր բայի տեղափոխվել ենթակայից առաջ: Չնշույթավորված վիճակում, ի տարբերություն անգլերենի, դրանք դրվում են իմաստակիր բայից հետո, իսկ շեշտելու և ընդգծելու համար կարող են տեղափոխվել իմաստակիր բայից առաջ: Օրինակ

Նշանավոր էին Սամաթիայի Ս. Գևորգ եկեղեցու ջրհանկիրները իրենց քաջությամբ, անվախությամբ, վազելու արագությամբ և հրդեհի մեջ նետվելու հանդգնությամբ (Դ. Աճառյան, *Կյանքիս հուշերից*», էջ 25):

Դժվար էր միշտ պատրվակ գտնելը (Ա. Բակունց, *Երկեր*, էջ 121):

Բազմությունը լուռ լսում էր: Չէի լսում ես (Ա. Բակունց, *Երկեր*, էջ 125):

Նրանք էլ էին զուգվել, և այնպես փայլում էին սարյակների սև փետուրները (Ա. Բակունց, *Երկեր*, էջ 123):

2. Անգլերենում շատ կիրառելի են եղանակավորող բայերով կազմվող կառույցները, ու թեև դրանք օգտագործվում են լիմաստ բայերի հետ և առանձին կիրառություն չունեն, սակայն խոսքին տալիս են հավելյալ իմաստ: Նախադասությանը որոշակի հուզականություն հաղորդելու նպատակով եղանակավորող բայերը և նրանց հետ կիրառվող իմաստակիր բայերը երբեմն դրվում են ենթակայից առաջ: Օրինակ

Sleep, however, he could not—so near her, yet so far from her (T. Hardy, Tess of the D'Urbervilles, p. 397).

Սակայն չկարողացավ քնել՝ այնքան մոտ, և միաժամանակ այնքան հեռու նրանից... (Թ. Հարդի, *Տես դ'Էրբերվիլների տոհմից*, էջ 422):

Speak of it I know you will not; and I can trust you not to write of it (T. Hardy, The Mayor of Casterbridge, p. 476).

Գիտեմ, դուք ոչ ոքի չեք պատմի, և լիովին հավատացած եմ, որ դրանց մասին նաև չեք գրի (Թ. Հարդի, *Քեսթերբրիջի քաղաքապետը*, էջ 147):

3. Բաղադրյալ անվանական ստորոգյալը կազմված է լինում հանգույցից և մի որևէ անուն խոսքի մասից՝ ստորոգելիական վերադրից, որոնց դիրքի փոփոխությունը ենթակայի նկատմամբ նույնպես խոսքին հաղորդում են ոճական որոշակի նրբերանգներ, ընդգծում և շեշտում են միտքը: Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, անգլերենում բաղադրյալ անվանական ստորոգյալի շրջումը կարող է լինել լրիվ և մասնակի, այսինքն՝ հնարավոր է շրջել և՛ ստորոգյալն ամբողջությամբ, և՛ նրա որևէ անդամը: Օրինակ

His father was shocked to see him, so reduced was that figure from its former contours by worry and the bad season (T. Hardy, Tess of the D'Urbervilles, p. 388).

Հայրը նույնպես ցնցված էր՝ որդին խիստ նիհարել էր հոգսերից ու անհաջողությունից (Թ. Հարդի, *Տես դ'Էրբերվիլների տոհմից*, էջ 412):

Noah was a charity-boy, but not a workhouse orphan. No-chance child was he, for he could trace his genealogy all the way back to his parents, who lived hard by (Ch. Dickens, *Oliver Twist*, p. 38).

Նոան ոչ թե աղքատանոցի, այլ որբանոցի տղա էր: Օլիվերի նման ընկեցիկ երեխա չէր նա, քանի որ կարող էր ամբողջ ազգաբանությունը մի առ մի բլել մինչև իր ծնողները, որոնք հենց մոտերքումն էլ ապրում էին (Չ. Դիկենս, Օլիվեր Թվիստի արկածները, էջ 37):

Wild was the wrestle which should be paramount; but another feeling rose and triumphed (Ch. Bronte, *Jane Eyre*, p. 992).

Պայքարը մոլեգին էր, և պետք է վճռական լիներ, բայց ահա առաջացավ մի նոր զգացում, և հաղթեց (Շ. Բրոնտե, Ջեյն Էյր, էջ 163) և այլն:

Հայերենում բաղադրյալ անվանական ստորոգյալի հանգույցն ունի կայուն դիրք, և այն վերադրից հեռացնելու դեպքում վերադիր է դառնում այն անդամը, որի մոտ դրվում է հանգույցը: Օրինակ

Ներքնում Աղամի տունն էր, ծորն էր, քարկապն էր, կաղնին էր, մարդ չկար, դիմացը՝ անտառն էր (Հ. Մաթևոսյան, Երկեր, էջ 47):

Եվ միտքն ընդգծելու համար ստորոգյալը իր երկու բաղադրիչով ենթակայից առաջ է բերվում: Օրինակ

Աշնան խաղաղ օրին նրան հաճելի էր և՛ սիմինդրի տերևների խշշոցը, և՛ վազերի օրորը, և՛ հնձանի դոնակի երգը (Ա. Բակունց, Երկեր, էջ 73):

Այս նախադասությանը հուզական երանգ է հաղորդում ոչ միայն բազմանդամ ենթական, այլ նաև շրջուն շարադասությունը:

Իբրև եզրակացություն կարելի է նշել հետևյալը.

1. Շարադասության տիպաբանական դասակարգման տեսակետից անգլերենն ու հայերենը պատկանում են միևնույն լեզվատիպին, և երկու լեզուներում էլ նախադասության հիմնական շարադասությունը հետևյալն է՝ S+P+O:

2. Թե մեկ և թե մյուս լեզուն ունեն նախադասության ոճական երանգավորման որոշակի միջոցներ, որոնց թվում են նաև ենթակայի և ստորոգյալի դիրքային առանձնահատկություններով պայմանավորված արտահայտչաձևերը: Նախադասությունները ոճական որոշակի նրբերանգ են ստանում, երբ ստորոգյալը մասնակի կամ ամբողջովին դրվում է ենթակայից առաջ, ինչն էլ խոսքին հաղորդում է հյուրեղություն:

ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ I. R. Galperin, *Stylistics*, Moscow, 1977, p. 204.

² И.В. Арнольд, *Стилистика современного английского языка*, М., 1990, стр. 162.

³ S-ենթակա, P-ստորոգյալ, O-խնդիր:

⁴ В.Д. Аракин, *Сравнительная типология английского и русского языков*, Л., 1979, стр. 201-202.

⁵ Дж. Гринберг, *Некоторые грамматические универсалии*, в сб. *Новое в лингвистике*, Вып. V, М., 1970, стр. 117.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Խ. Գ. Բաղդկյան, Ժամանակակից հայերենի պարզ նախադասության շարադասությունը, Ե., 1976, 200 էջ:
2. Ս. Վ. Գյուլբուդաղյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1988, 292 էջ:
3. Ռ. Ա. Իշխանյան, Արդի հայերենի շարահյուսություն, Ե., 1986, 340 էջ:
4. В. Д. Аракин, Сравнительная типология английского и русского языков, Л., 1979, стр. 201–202.
5. И. В. Арнольд, Стилистика современного английского языка, М., 1990, стр. 300.
6. Л. М. Булгакова, Место подлежащего относительно сказуемого в современном английском языке, Ин. яз. в школе, М., 1950 (2), стр. 24–38.
7. Дж. Гринберг, Некоторые грамматические универсалии, В сб.: Новое в лингвистике, вып. V, М., 1970, стр. 114–163.
8. И. Б. Данилова, О видах инверсии. Уч. Зап. ЛГПИ им. А. Герцена, том 261, Л., 1965, стр. 41–54.
9. Е. С. Смушкевич, К вопросу о стилистическом использовании порядка слов в современном английском языке, В сб.: Вопросы английского и немецкого языкознания, Уфа, 1962, стр. 169–182.
10. I. R. Galeperin, Stylistics, Moscow, 1970.

С.Р. Саркисян

СТИЛИСТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ПОРЯДКА ЧЛЕНОВ ПРЕДЛОЖЕНИЯ – ПОДЛЕЖАЩЕГО И СКАЗУЕМОГО В АНГЛИЙСКОМ И АРМЯНСКОМ ЯЗЫКАХ

Статья – это попытка проанализировать позиционные особенности подлежащего и сказуемого в обоих языках с целью сопоставления. Автор изучил примеры, взятые из английской и армянской литературы и пришел к следующему выводу: в обоих языках предложения получают определенную стилистическую окраску, когда сказуемое ставится перед подлежащим частично или полностью.

S.R. Sargsyan

THE STYLISTIC PECULIARITIES OF WORD ORDER OF SUBJECT AND PREDICATE IN ENGLISH AND ARMENIA

The article "The Stylistic Peculiarities of Word Order of Subject and Predicate in English and Armenian" is an attempt to analyze the positional peculiarities of subject and predicate in both languages for the purpose of comparison. The author investigated examples taken from English and Armenian literature and came to the following conclusion: *in both languages, sentences acquire certain stylistic colouring when the predicate is placed before the subject fully or partially.*